

ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ (ՀՀ ՎՊԽ) ՆԻՍՏԵՐ

05.11.2010թ. նիստին

Մասնակցում էին՝

ՀՀ ՎՊԽ նախագահ Ս.Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամներ՝ Գ. Անանյանը, Գ. Գևորգյանը, Վ. Դավթյանը, Ա. Աղազարյանը, Ա.Շաբոյանը, ՀՀ ՎՊԽ քարտուղար Հ.Գրիգորյանը:

Հրավիրված էին՝

ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ. Միրզոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ղեկավար Ա.Հայրապետյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ Դ.Մարտիրոսովան, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի պետ Լ.Պետրոսյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Ա.Սաֆյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի գյուղատնտեսության վիճակագրության բաժնի պետ Ա. Ավագյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի արդյունաբերության վիճակագրության բաժնի պետ Ա. Անանյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի շինարարության վիճակագրության բաժնի պետ Մ. Պետրոսյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մարդահամարի վարչության տվյալների մշակման և դասակարգումների բաժնի պետ Ա.Սարգսյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի գյուղատնտեսության բաժնի առաջատար մասնագետ Վ. Արևշատյանը:

Նիստում լավեցին հետևյալ հարցերը.

1. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից 2010 թվականի առաջին եռամսյակում իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության անվանագերծված տվյալների բազան Համաշխարհային բանկի Երևանի գրասենյակին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

/Զեկուցող՝ Դ. Մարտիրոսովա/

Որոշվեց՝

Թույլատրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնին՝ Համաշխարհային բանկի Երևանի գրասենյակին տրամադրել Հայաստանի

Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից 2010 թվականի առաջին եռամսյակում իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության արդյունքում ձևավորված անվանագերծված տվյալների բազան՝ զուտ գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար օգտագործելու, այլ անձանց չփոխանցելու, չվաճառելու, չհրապարակելու և այլ կարգով չտարածելու պայմաններով:

/Անհատական/

2. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից 2009 թվականին իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության անվանագերծված տվյալների բազան Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությանը տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

/Զեկուցող՝ Դ. Մարտիրոսովա/

Որոշվեց՝

Թույլատրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնին՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությանը տրամադրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից 2009 թվականին իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության արդյունքում ձևավորված անվանագերծված տվյալների բազան՝ զուտ գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար օգտագործելու, այլ անձանց չփոխանցելու, չվաճառելու, չհրապարակելու և այլ կարգով չտարածելու պայմաններով:

/Անհատական/

3. «ՀՀ ՎՊԽ 2004թ. դեկտեմբերի 29-ի «Հաշվետվություն գիտատեխնիկական նվաճումների արմատավորման, օգտագործման վրա կատարված ծախսերի և դրանց տնտեսական արդյունավետության մասին Ձև թիվ 18-ՆՏ (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը հաստատելու մասին թիվ 25-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին», ՀՀ ՎՊԽ 2004թ. դեկտեմբերի 29-ի «Արդյունաբերական արտադրանքի նորացումը Ձև թիվ 5-ՆՏ (նորացում) տարեկան պետական վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը հաստատելու մասին թիվ 26-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ ՎՊԽ 2004 թվականի դեկտեմբերի 29-ի «Արտադրական հզորության հաշվեկշիռ Ձև ՀՀ (տարեկան) պետական

վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը հաստատելու մասին թիվ 21-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Ա.Անանյան/

Որոշվեց՝

Հաստատել «ՀՀ ՎՊԽ 2004թ. դեկտեմբերի 29-ի «Հաշվետվություն գիտատեխնիկական նվաճումների արմատավորման, օգտագործման վրա կատարված ծախսերի և դրանց տնտեսական արդյունավետության մասին Ձև թիվ 18-ՆՏ (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը հաստատելու մասին թիվ 25-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին», ՀՀ ՎՊԽ 2004թ. դեկտեմբերի 29-ի «Արդյունաբերական արտադրանքի նորացումը Ձև թիվ 5-ՆՏ (նորացում) տարեկան պետական վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը հաստատելու մասին թիվ 26-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» և ՀՀ ՎՊԽ 2004 թվականի դեկտեմբերի 29-ի «Արտադրական հզորության հաշվեկշիռ Ձև ՀՀ (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը հաստատելու մասին թիվ 21-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» որոշումները:

/Նորմատիվ/

4. «Օբյեկտների գործարկման և շինարարական աշխատանքների կատարման մասին» Ձև թիվ 1-ԿՇ (ամսական) պետական վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը հաստատելու և ՀՀ ՎՊԽ 2007թ. դեկտեմբերի 14-ի թիվ 21-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին, «Օբյեկտների, հիմնական միջոցների գործարկման և շինարարության իրականացման մասին» Ձև թիվ 2-ԿՇ (ամսական) պետական վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը հաստատելու և ՀՀ ՎՊԽ 2007թ. հունիսի 18-ի թիվ 11-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին, «Բնակչության միջոցների հաշվին անհատական բնակելի շենքերի գործարկման մասին» Ձև ԱԲՇ (ամսական) պետական վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը հաստատելու և ՀՀ ՎՊԽ 2004թ. դեկտեմբերի 29-ի թիվ 41-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին, «Բնակչության միջոցների հաշվին կառուցվող տարբեր նշանակության օբյեկտների վրա (բացի բնակելի շենքերից) իրականացված շինարարական աշխատանքների ծավալների մասին» Ձև ՄՇ (ամսական) պետական վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը հաստատելու և ՀՀ ՎՊԽ 2004թ. դեկտեմբերի 29-ի թիվ 42-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին, ՀՀ ՎՊԽ 2004թ. դեկտեմբերի 29-ի «Արտադրական շինարարության մասին» Ձև թիվ 8-կշ (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվության ձևն ու

լրացման հրահանգը հաստատելու մասին» թիվ 38-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին » հարցը:

/Զեկուցող՝ Մ. Պետրոսյան/

Որոշվեց՝

Հաստատել «Օբյեկտների գործարկման և շինարարական աշխատանքների կատարման մասին» Ձև թիվ 1-ԿՇ (ամսական) պետական վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը, «Օբյեկտների, հիմնական միջոցների գործարկման և շինարարության իրականացման մասին» Ձև թիվ 2-ԿՇ (ամսական) պետական վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը, «Բնակչության միջոցների հաշվին անհատական բնակելի շենքերի գործարկման մասին» Ձև ԱԲՇ (ամսական) պետական վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը, «Բնակչության միջոցների հաշվին կառուցվող տարբեր նշանակության օբյեկտների վրա (բացի բնակելի շենքերից) իրականացված շինարարական աշխատանքների ծավալների մասին » Ձև ՄՇ (ամսական) պետական վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման հրահանգները, ինչպես նաև ուժը կորցրած ճանարել ՀՀ ՎՊԽ 2007թ. դեկտեմբերի 14-ի թիվ 21-Ն, ՀՀ ՎՊԽ 2007թ. հունիսի 18-ի թիվ 11-Ն, ՀՀ ՎՊԽ 2004թ. դեկտեմբերի 29-ի թիվ 41-Ն, ՀՀ ՎՊԽ 2004թ. դեկտեմբերի 29-ի թիվ 42-Ն և ՀՀ ՎՊԽ 2004թ. դեկտեմբերի 29-ի «Արտադրական շինարարության մասին» Ձև թիվ 8-կշ (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը հաստատելու մասին » թիվ 38-Ն որոշումները:

/Նորմատիվ/

5. ««Հայաստանի Հանրապետության վարչատարածքային միավորների ծածկագրման ձեռնարկ»-ը Հայաստանի Հանրապետության 2011 թվականի մարդահամարի նյութերի մշակման փուլում գործածելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Ա.Սարգսյան/

Որոշվեց՝

Թույլ տալ Հայաստանի Հանրապետությունում 2011 թվականի մարդահամարի նյութերի մշակման փուլում գործածել «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային միավորների ծածկագրման ձեռնարկը »:

/Անհատական/

6. «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2009 թվականի նոյեմբերի 9-ի թիվ 37-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Ա.Հայրապետյան/

Որոշվեց՝

Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 09.11.2009 թվականի «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմ պետական կառավարչական հիմնարկին հանձնվող գույքի կազմը և չափը հաստատելու մասին» թիվ 37-Ա որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածի 1-ին տողի «5998.7» թիվը փոխարինել «16793.5» թվով, ինչպես նաև 2-րդ տողի «530920.6» թիվը փոխարինել «531815.6» թվով:

/Անհատական/

7. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

7.1. Հաղորդում Ռուսաստանի Դաշնության Մոսկվա քաղաքում 20.09-25.09.2010թ. տեղի ունեցած «Ռուսաստանի Դաշնությունում 2006թ. իրականացված գյուղատնտեսական համատարած հաշվառման փորձին (օրենսդրական դաշտ, հարցաթերթեր և դրանց լրացման հրահանգեր, տվյալների հավաքագրման և մշակման համակարգչային ծրագիր, ցուցանիշների հրապարակում և տարածում, պահպանում ու արդիականացում) ծանոթանալու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Գ. Անանյան, Ա. Հայրապետյան, Ա. Ավագյան, Վ. Արևշատյան/

7.2. Հաղորդում Վրաստանի Թբիլիսի քաղաքում 27.09-29.09.2010թ. տեղի ունեցած ՄԱԿ-ի Եվրոպայի Տնտեսական Հանձնաժողովի (UNECE) և Վրաստանի ազգային վիճակագրական ծառայության հրավերով «Գենդերային վիճակագրություն» խորագրով տարածաշրջանային սեմինարին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Գ. Գևորգյան, Ա. Գյուլբենկյան/

7.3. Հաղորդում Գերմանիայի Քյոլն քաղաքում 28.09-30.09.2010թ. տեղի ունեցած Եվրամիության վիճակագրական ծառայության (Եվրոստատ) կողմից կազմակերպված «Ազգային վիճակագրական ծառայությունների համակարգող դերն ազգային վիճակագրական համակարգում» խորագրով բարձր մակարդակի սեմինարին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Ս. Մնացականյան, Ա. Սաֆյան/

7.4. Հաղորդում Թուրքիայի Անկարա քաղաքում 29.09-01.10.2010թ. տեղի ունեցած ՄԱԿ-ի Մանկական Հիմնադրամի հրավերով TRANSMONEE ծրագրի շրջանակում անդամ երկրների համակարգողների հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Լ. Պետրոսյան/

Որոշվեց՝

Արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին հաղորդումներն ընդունել ի գիտություն:

/Անհատական/

02.12.2010թ. նիստին

Մասնակցում էին՝

ՀՀ ՎՊԽ նախագահ Ս.Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամներ՝ Գ. Անանյանը, Գ. Գևորգյանը, Վ. Դավթյանը, Ա. Շաբոյանը, Յու.Պողոսյանը, ՀՀ ՎՊԽ քարտուղար Հ.Գրիգորյանը:

Հրավիրված էին՝

ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ. Միրզոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ Դ.Մարտիրոսովան, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի պետ Լ.Պետրոսյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Ա.Սաֆյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տրանսպորտի և կապի վիճակագրության բաժնի պետ Գ. Թորոսյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի պետ Ն. Բաղդասարյանը:

Նիստում լսվեցին հետևյալ հարցերը.

1. «2011 թվականի հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում իրականացվելիք տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության հարցաթերթը և օրագիրը հաստատելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Դ. Մարտիրոսովա/

Որոշվեց՝

Հաստատել 2011 թվականի հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում իրականացվելիք տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության հարցաթերթը և օրագիրը՝ համաձայն հավելվածի:

/Անհատական/

2. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից՝ 2010 թվականի երկրորդ եռամսյակում իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության

անվանագերծված տվյալների բազան Համաշխարհային բանկի Երևանի գրասենյակին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

/Զեկուցող՝ Դ. Մարտիրոսովա/

Որոշվեց՝

Թույլատրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնին՝ Համաշխարհային բանկի Երևանի գրասենյակին տրամադրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից 2010 թվականի երկրորդ եռամսյակում իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության արդյունքում ձևավորված անվանագերծված տվյալների բազան՝ զուտ գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար օգտագործելու, այլ անձանց չփոխանցելու, չվաճառելու, չհրապարակելու և այլ կարգով չտարածելու, պայմաններով:

/Անհատական/

3. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

3.1. Հաղորդում Վրաստանի Բաթում քաղաքում 30.09-01.10.2010թ. տեղի ունեցած «Քաղաքային բնակավայրերում անվտանգ և առողջության համար օգտակար հետիոտնային և հեծանվային երթևեկություն» խորագրով սեմինարին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Գ.Թորոսյան/

3.2. Հաղորդում Ղազախստանի Ալմաթի քաղաքում հոկտեմբերի 12–15-ը 2010թ. տեղի ունեցած «ՅՈՒՆԵՍԿՕ-ի մշակույթի վիճակագրության համակարգը Կենտրոնական Ասիայում և Արևելյան Եվրոպայում» թեմայով տարածաշրջանային ուսուցողական սեմինարին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Ն.Բաղդասարյան/

3.3. Հաղորդում Չեխիայի Պրահա քաղաքում հոկտեմբերի 23-28-ը 2010թ. տեղի ունեցած ՄԱԶԾ Չեխիա Տրաստային Հիմնադրամի կողմից կազմակերպված «ՀՀ հանրային ծառայողների բնապահպանական մոնիթորինգի, տեղեկատվության կառավարման և հաշվետվողականության կարողությունների զարգացում» ուսումնական այցի վերաբերյալ:

/Զեկուցող՝ Յու. Պողոսյան/

3.4. Հաղորդում Ֆիլիպինների Մանիլա քաղաքում հոկտեմբերի 26-27-ը 2010թ. տեղի ունեցած Ասիական զարգացման բանկի (ԱԶԲ) կողմից կազմակերպված «Ոչ ֆորմալ հատվածի և ոչ ֆորմալ զբաղվածության գնահատում» խորագրով համաժողովին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Ա. Շաբոյան, Լ. Քալանթարյան, Դ. Մարտիրոսովա/

3.5. Հաղորդում Ուզբեկստանի Տաշքենդ քաղաքում նոյեմբերի 4-5-ը 2010թ. տեղի ունեցած ՅՈՒՆԵՍԿՕ-ի վիճակագրության ինստիտուտի, Կրթության, գիտության և մշակույթի իսլամական կազմակերպության, Ուզբեկստանի գիտությունների ակադեմիայի և Ուզբեկստանում ՅՈՒՆԵՍԿՕ-ի Ազգային հանձնաժողովի կողմից կազմակերպված «Գիտության, տեխնիկայի և նորամուծության վիճակագրության և ցուցանիշների վերաբերյալ Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային խորհրդատվական հանդիպմանը» մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Ն. Բաղդասարյան/

3.6. Հաղորդում Շվեյցարիայի Ժնև քաղաքում նոյեմբերի 8-11-ը 2010թ. տեղի ունեցած ՄԱԿ-ի վիճակագրության բաժնի և ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի կողմից կազմակերպված «Հազարամյակի զարգացման նպատակների (ՀԶՆ) մոնիթորինգը» խորագրով աշխատանքային հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Ս. Մնացականյան, Ա. Սաֆյան/

3.7. Հաղորդում Բելգիայի Թագավորության Բրյուսել քաղաքում նոյեմբերի 11-12-ը 2010թ. տեղի ունեցած «Եվրոպական հարևանության գործընկերության գործիքի Էկոլոգիական տեղեկատվության միասնական համակարգի նախագծի իրականացման համար առաջնահերթությունների վերաբերյալ խորհրդատվական հանդիպմանը» մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Յու. Պողոսյան/

3.8. Հաղորդում Ռուսաստանի Դաշնության Մոսկվա քաղաքում նոյեմբերի 17-19-ը 2010թ. տեղի ունեցած Միավորված Ազգերի Կազմակերպության (ՄԱԿ) վիճակագրության վարչության, Եվրոստատի, Ռուսաստանի վիճակագրական կոմիտեի կողմից կազմակերպված «Արագ ահազանգման և բիզնես ցիկլի ցուցանիշներին նվիրված երրորդ միջազգային սեմինարին» մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Ա. Շաբոյան/

Որոշվեց՝

Արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին հաղորդումներն ընդունել ի գիտություն:

/Անհատական/

10.12.2010թ. նիստին

Մասնակցում էին՝

ՀՀ ՎՊԽ նախագահ Ս.Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամներ՝ Գ. Անանյանը, Գ. Գևորգյանը, Վ. Դավթյանը, Ա. Շաբոյանը, Ա. Աղազարյանը, ՀՀ ՎՊԽ քարտուղար Հ.Գրիգորյանը:

Հրավիրված էին՝

ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ. Միրզոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ղեկավար Ա.Հայրապետյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի պետ Լ.Պետրոսյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Ա.Սաֆյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի պետ Գ. Մարտիրոսյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի իրավաբանական բաժնի առաջատար մասնագետ Գ. Հովսեփյանը:

Նիստում լսվեցին հետևյալ հարցերը.

1. ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2002 թվականի դեկտեմբերի 2-ի «Հաշվետվություն կազմակերպության գործունեության հիմնական ֆինանսական ցուցանիշների վերաբերյալ» Ձև թիվ 1-Ֆ (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը հաստատելու մասին» թիվ 261-Ն և ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2002 թվականի դեկտեմբերի 2-ի «Հաշվետվություն կազմակերպության միջոցների կազմի և դրանց գոյացման աղբյուրների վերաբերյալ Ձև թիվ 2-Ֆ (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը հաստատելու մասին» թիվ 263-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Լ. Պետրոսյան/

Որոշվեց՝

Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2002 թվականի դեկտեմբերի 2-ի «Հաշվետվություն կազմակերպության «գործունեության հիմնական ֆինանսական ցուցանիշների վերաբերյալ» Ձև թիվ 1-Ֆ (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը հաստատելու մասին » թիվ 261-ն և «Հաշվետվություն կազմակերպության միջոցների կազմի և դրանց գոյացման աղբյուրների վերաբերյալ Ձև

թիվ 2-Ֆ (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը հաստատելու մասին» թիվ 263-ն որոշումները:

/Նորմատիվ/

2. «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2002 թվականի սեպտեմբերի 10-ի թիվ 229-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Ա.Հայրապետյան/

Որոշվեց՝

Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2002 թվականի սեպտեմբերի 10-ի թիվ 229-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ՝ համապատասխանեցնելով այն 2010 թվականի հունիսի 7-ին ընդունած «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին:

/Նորմատիվ/

3. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

3.1. Հաղորդում Ղազախստանի Հանրապետության Աստանա քաղաքում 2010թ. հոկտեմբերի 8-11-ը ԱՊՀ վիճակագրական ծառայությունների ղեկավարների խորհրդի 44-րդ նիստին, Ղազախստանի վիճակագրության 90 ամյակին նվիրված գիտագործնական կոնֆերանսին, ինչպես նաև 2011թ. տվյալներով միջազգային գլոբալ համադրումների ծրագրի շրջանակում ԱՊՀ երկրներում միջազգային համադրումների աշխատանքների իրականացման համար սպառողական ապրանք-ծառայություն ներկայացուցիչների քննարկման և համաձայնեցման նպատակով աշխատանքային սեմինար-խորհրդակցությանը մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Լ. Միրզոյան, Գ. Մարտիրոսյան/

3.2. Հաղորդում Շվեյցարիայի Ժնև քաղաքում 2010թ. հոկտեմբերի 18-19-ը ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի Կանանց դեմ բռնության փորձագիտական խմբի երկրորդ հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Գ. Գևորգյան, Լ. Պետրոսյան/

Որոշվեց՝

Արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին հաղորդումներն ընդունելի գիտություն:

/Անհատական/

21.12.2010թ. նիստին

Մասնակցում էին՝

ՀՀ ՎՊԽ նախագահ Ս.Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամներ՝ Գ. Անանյանը, Գ. Գևորգյանը, Յու. Պողոսյանը, Վ. Դավթյանը, Ա. Շաբոյանը, Ա. Աղազարյանը, ՀՀ ՎՊԽ քարտուղար Հ.Գրիգորյանը:

Հրավիրված էին՝

ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ. Միրզոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վիճակագրական տեղեկատվության տարածման և մարկետինգի բաժնի պետ Ն. Մուշեղյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Ա.Սաֆյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի պետ Գ. Մարտիրոսյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի պետ Լ.Պետրոսյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի գլխավոր մասնագետ Ն. Աստվածատուրովան, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Ս. Պողոսյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի գլխավոր մասնագետ Մ. Երիցյանը:

Նիստում լսվեցին հետևյալ հարցերը.

1. «2010 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագիրը հաստատելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Ն.Մուշեղյան/

Որոշվեց՝

Հաստատել «2011 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագիրը»՝ համաձայն հավելվածի:

/Նորմատիվ/

2. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

2.1. Հաղորդում՝ Նեպալի Կատմանդու քաղաքում 2010 թվականի նոյեմբերի 30-ից դեկտեմբերի 1-ը տեղի ունեցած «Երեխաների և չափահասների շրջանում հարկադիր աշխատանքի տարածվածության գնահատման մեթոդաբանական հարցեր» թեմայով սեմինարին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Կ. Կույունջյան/

2.2. Հաղորդում՝ Թուրքիայի Ստամբուլ քաղաքում 2010 թվականի դեկտեմբերի 6-ից 8-ը տեղի ունեցած ՄԱԿ-ի Եվրոպական Տնտեսական Հանձնաժողովի (UNECE) կողմից կազմակերպված «Միգրացիայի վիճակագրության առկա իրավիճակն ու դրան առնչվող հիմնախնդիրները տեղեկատվություն տրամադրողների և սպառողների տեսանկյունից» խորագրով սեմինարին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Ա. Թոխաթյան/

2.3. Հաղորդում՝ Ռուսաստանի Դաշնության Մոսկվա քաղաքում 2010 թվականի նոյեմբերի 30-ից դեկտեմբերի 2-ը տեղի ունեցած 2011թ. համար միջազգային գլոբալ համադրումների ծրագրի շրջանակում ՀՆԱ 1993թ. դրույթներին համապատասխան ազգային դրամով ՀՆԱ-ի մասին տվյալների նախապատրաստման վերաբերյալ հարցերով ԱՊՀ տարածաշրջանի երկրների վիճակագրական ծառայությունների մասնագետների սեմինար-խորհրդակցությանը մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Գ. Մարտիրոսյան, Ն. Աստվածատուրովա/

2.4. Հաղորդում՝ Վրաստանի Թբիլիսի քաղաքում 2010 թվականի դեկտեմբերի 13-ից 18-ը տեղի ունեցած 2011 թվականի համար միջազգային գլոբալ համադրումների ծրագրի շրջանակում երկկողմանի աշխատանքների իրականացման նպատակով «Սպառված ապրանք (ծառայություն) ներկայացուցիչների ընտրանքի և ցանկի ճշգրտում» թեմայով աշխատանքային հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Գ. Մարտիրոսյան, Մ. Երիցյան/

Որոշվեց՝

Արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին հաղորդումներն ընդունելի գիտություն:

/Անհատական/

29.12.2010թ. նիստին

Մասնակցում էին՝

ՀՀ ՎՊԽ նախագահ Ս.Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամներ՝ Գ. Անանյանը, Գ. Գևորգյանը, Յու. Պողոսյանը, Վ. Դավթյանը, Ա. Շաբոյանը, Ա. Աղազարյանը, ՀՀ ՎՊԽ քարտուղար Հ.Գրիգորյանը:

Հրավիրված էին՝

ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ. Միրզոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի

գլխավոր մասնագետ Ա.Դաշյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի գյուղատնտեսության վիճակագրության բաժնի պետ Ա. Ավագյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Ս. Պողոսյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Ա.Սաֆյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի Կոտայքի մարզային գործակալության ամփոփ և տարածքային վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետ Հ. Հայրապետյանը:

Նիստում լսվեցին հետևյալ հարցերը.

1.1. ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2002թ. օգոստոսի 9-ի «Հաշվետվություն կարտոֆիլի գնումների մասին» Ձև թիվ 6-գնում (ամսական) պետական վիճակագրական հաշվետվության ձևի և լրացման հրահանգի մասին թիվ 111-Ն,

1.2. 2002թ. օգոստոսի 9-ի «Հաշվետվություն բանջարեղենի գնումների մասին» Ձև թիվ 7-գնում (ամսական) պետական վիճակագրական հաշվետվության ձևի և լրացման հրահանգի մասին թիվ 112-Ն,

1.3. 2002թ. օգոստոսի 9-ի «Հաշվետվություն մրգերի և բոստանային մշակաբույսերի գնումների մասին» Ձև թիվ 8-գնում (ամսական) պետական վիճակագրական հաշվետվության ձևի և լրացման հրահանգի մասին թիվ 113-Ն,

1.4. 2002թ. օգոստոսի 9-ի «Հաշվետվություն շաքարի ճակնդեղի, եթերայուղատու մշակաբույսերի, վայրի պտուղների և հատապտուղների, սնկերի, ընկույզի, մեղրի և շերամի բոժոժի գնումների մասին» Ձև թիվ 9-գնում (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվության ձևի և լրացման հրահանգի մասին թիվ 114-Ն,

1.5. 2002թ. օգոստոսի 9-ի «Հաշվետվություն անասունի, թռչունի և ճագարի գնումների մասին» Ձև թիվ 11-գնում (եռամսյակային) պետական վիճակագրական հաշվետվության ձևի և լրացման հրահանգի մասին թիվ 115-Ն,

1.6. 2002թ. օգոստոսի 9-ի «Հաշվետվություն կաթի գնումների մասին» Ձև թիվ 13-գնում (եռամսյակային) պետական վիճակագրական հաշվետվության ձևի և լրացման հրահանգի մասին թիվ 116-Ն,

1.7. 2002թ. օգոստոսի 9-ի «Հաշվետվություն ձվի գնումների մասին» Ձև թիվ 14-գնում (եռամսյակային) պետական վիճակագրական հաշվետվության ձևի և լրացման հրահանգի մասին թիվ 117-Ն,

1.8. 2002թ. օգոստոսի 9-ի «Հաշվետվություն բրդի և նրբագեղ մորթու գնումների մասին» Ձև թիվ 15-գնում (եռամսյակային) պետական վիճակագրական հաշվետվության ձևի և նրա լրացման հրահանգի մասին թիվ 118-Ն,

1.9. 2002թ. օգոստոսի 9-ի «Հաշվետվություն մորթից ստացված կաշեհումքի, մորթու և անասնապահական այլ հումքի գնումների մասին» Ձև թիվ 16-գնում (եռամսյակային) պետական վիճակագրական հաշվետվության ձևի և դրա լրացման հրահանգի մասին թիվ 119-Ն որոշումները ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Ա. Ավագյան/

Որոշվեց՝

Ուժը կորցրած ճանաչել ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2002թ. օգոստոսի 9-ի թիվ 111-ն, 112-ն, 113-ն, 114-ն, 115-ն, 116-ն, 117-ն, 118-ն, և 119-ն որոշումները:

/Նորմատիվ/

2. Հաղորդում արտասահմանյան գործուղման հաշվետվության մասին.

Հաղորդում Եգիպտոսի Կահիրե քաղաքում 2010 թվականի հունվարի 24-ից մինչև 2010 թվականի դեկտեմբերի 16-ը «Կահիրեի Ժողովրդագրության կենտրոնի և ԱՊՀ երկրների հետ տեխնիկական համագործակցության եգիպտական հիմանդրամի կողմից Կահիրեում կազմակերպված ժողովրդագրության վերաբերյալ միամյա ուսուցման դասընթացին» մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Հ. Հայրապետյան, Ա. Աղամյան/

Որոշվեց՝

Արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին հաղորդումներն ընդունել ի գիտություն:

/Անհատական/